Չորրորդ հաղորդում

Աստծու տան կառուցման վերականգնումը
Աստծու մարգարեների աստվածային քաջալերման շնորհիվ

Գրվածքների ընթերցում. Եզր 5:1-2, Անգ 1:2-5, 7-8, 9բ, 14, 2:6-7, 9ա, 23, Զք 3:9, 4:2-7, 11-14

I. **Վերականգնված տաճարի՝ որպես Աստծու տան վերակառուցման ժամանակ և՛ Հեսուն (ով ներկայացնում է քահանայությունը) և Զորոբաբելը (ով ներկայացնում է թագավորումը) ինչ-որ առումով տկարացան և վհատվեցին, ուստի Աստված օգտագործեց Անգե և Զաքարիա մարգարեներին՝ Իր անունից խոսելու համար, որպեսզի ամրապնդեն, օժանդակեն ու քաջալերեն Հեսուին և Զորոբաբելին՝ Եզր 5:1-2, հմմտ Ա Կրթ 14:3:**

II. **Անգեի մարգարեության կենտրոնական միտքն այն է, որ Եհովայի տան՝ Աստծու տաճարի կառուցումը կապված է այսօր Աստծու ժողովրդի բարեկեցության և վերակերտման դարաշրջանում իր Մեսիայով հանդերձ հազարամյա թագավորության գալստյան հետ՝ Անգ 1:2-5, 7-8, 9բ, 14, 2:6-9, 20-23, Մտթ 19:28, Գրծ 3:20-21.**

Ա. Հին Կտակարանում Եհովայի տունը, կամ տաճարը, նախ Քրիստոսի՝ որպես անհատական տեսանկյունից Աստծու տան նախատիպն էր, ապա եկեղեցու՝ Մարմնի, ընդլայնված Քրիստոսի՝ որպես ընդհանրական տեսանկյունից Աստծու տան նախատիպը՝ Հվի 2:19-21, Ա Տմթ 3:15:

Բ. Քանի որ Եհովայի տունը եկեղեցու նախատիպն է, Անգեի մարգարեությունը առնչվում է մեզ՝ նորկտակարանյան հավատացյալներիս, քանի որ մենք այդ նախատիպի իրականությունն ենք:

Գ. Անգեն խոսեց Զորոբաբելի՝ իշխանի և Հեսուի՝ քահանայապետի հետ, որպեսզի նրանց և ժողովրդին ամրապնդի ու քաջալերի՝ տաճարը՝ որպես Աստծու տունը, վերակառուցելու համար՝ Եզր 5:1, Անգ 1:1:

Դ. Գերությունից վերադարձածները, որոնք միայն իրենց շահերի համար էին հոգում ու Աստծուն անտեսում, հոգում էին իրենց տների, բայց ոչ Եհովայի տան համար (խ. 4). «վազել» բառը 9-րդ խոսքում ցույց է տալիս, որ մարդիկ զբաղված էին իրենց սեփական տների համար հոգալով:

Ե. Անգ 1:6-ը ենթադրում է, որ եթե անտեսենք եկեղեցին, իրական վայելք ու բավարարություն չենք ունենա. Աստծու տան կառուցման վերականգնման առնչությամբ մենք չենք կարող չեզոք լինել. մենք պետք է լինենք բացարձակ և հոգանք կամ նախ մեր տների համար, կամ նախ Տիրոջ տան համար՝ Մտթ 6:33, Ղկս 9:57-62, Փլպ 2:20-21:

Զ. Աստծու տան կառուցումը վերականգնելու համար Աստծու ընտրյալներն իրենց հոգում արթնացվեցին և եկան ու կատարեցին աշխատանքը Եհովայի տանը. ի արձագանք Տիրոջ պատվերին՝ մենք բոլորս պետք է Տեր Հիսուսին թույլ տանք մեզ դնել ավետարանչության, նորահավատներին կերակրելու և ուրիշների համար հոգալու գործին՝ Տիրոջ տան՝

եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի կառուցման համար՝ Անգ 1:14, 2:7ա, Հվի 21:15-17:

Է. «Բոլոր ազգերը կսասանեմ, և բոլոր ազգերի Ցանկությունը կգա»՝ Անգ 2:7ա.

1. Սա վերաբերում է Քրիստոսին, ով բոլոր ազգերի Ցանկությունն է. թեև ազգերը Քրիստոսին չեն ճանաչում, նրանք, միևնույն է, ցանկանում են Նրան. այն, որ ազգերը այնպիսի բաներ են ցանկանում, ինչպիսիք են լույսը, սերը, ուրախությունն ու արդարությունը, որոնց իրականությունը Քրիստոսն է, նշանակում է, որ նրանք ենթագիտակցորեն ցանկանում են Քրիստոսին՝ Մղք 3:1բ:
2. Քրիստոսի՝ որպես բոլոր ազգերի Ցանկության գալուստը կախված է բաբելոնյան գերությունից Աստծու ժողովրդի վերադարձից և Աստծու տան կառուցման վերականգնումից՝ Ա Տմթ 3:15, Ա Պտ 2:5:

Ը. «Ես այս տունը փառքով կլցնեմ.... Այս տան վերջին փառքն ավելի մեծ կլինի, քան նախկինը»՝ Անգ 2:7բ, 9ա.

1. Աստծու փառքը՝ Աստծու արտահայտությունը, Աստծու կառույցի՝ Եհովայի տան մեջ է՝ Ելց 40:34-35, Գ Թգ 8:10-11, Բ Մնց 3:1, 5:1-2, 13-14, Եփս 3:21, Հյտ 21:10-11:
2. Աստծու տեսիլում Եզեկիելը տեսավ, որ Եհովայի փառքը վերադարձել է Եհովայի տուն ու լցրել է այն (Եզկ 43:1-5). Եհովայի փառքը տուն վերադարձավ, որովհետև տան կառուցումն ավարտվեց (խխ. 2, 5). սրանից հետևում է, որ, որպեսզի փառքի Աստված եկեղեցում բնակվի, եկեղեցին պետք է կառուցվի և Աստծու բնակատեղը դառնա (Եփս 2:21-22, 3:14-21):
3. Եզեկիելը տեսավ, որ կյանքի ջրի գետը, որ ելնում էր Աստծու տնից, հոսում էր դեպի արևելք՝ Աստծու փառքի ուղղությամբ (Եզկ 47:1, 43:2). եթե չհոգանք Աստծու փառքի համար, մեր ներսում հոսքը սահմանափակ կլինի:
4. Եկեղեցական կյանքում մենք, նախևառաջ, մեր ուշադրությունը պետք է Տիրոջ փառքին սևեռենք. եկեղեցական կյանքում որոշումները պետք է գլխավորապես Տիրոջ փառքի համաձայն ընդունվեն՝ Եփս 3:21, 4:20, Ա Պտ 4:10-11, Հդ 24-25:
5. Աստծուն փառավորելը մեր ծառայության նպատակն է. բարձրագույն ծառայությունը, որ մենք կարող ենք մատուցել Աստծուն, Նրան փառավորելն է՝ Աստվածամարդու կյանքով ապրելով (Եսյ 43:7, Հվի 7:16-18, 17:1-4, Հռմ 9:21, 23, Փլպ 1:19-21ա, Ա Կրթ 6:19-20, 10:31). սա այն բանի համար է, որ մենք արտահայտենք Աստծուն ընդհանրական, կառուցված կերպով և մտնենք աստվածային փառքի միասնության մեջ (Հվի 17:22-24):

Թ. Այն, որ Եհովան Զորոբաբելին իբրև կնիք էր դարձնելու (Անգ 2:23), ցույց է տալիս, որ Եհովան նրան համարում էր Իր ներկայացուցիչը և որ սիրում էր նրան ու վստահում էր նրան. այս առումով Զորոբաբելը

Քրիստոսի նախատիպն է, իսկ Նա Մեկն է, ում Աստված սիրում ու վստահում է (Մտթ 3:17, 17:5, Հվհ 3:35, 17:2). որպես այդպիսի անձ՝ Քրիստոսը որակավորված է հոգալու Աստծու տան՝ եկեղեցու կառուցման համար (Մտթ 16:18):

III. Զաքարիա մարգարեի գիրքը բացահայտում է, որ ճրագակալի յոթ ճրագները (4:2, Հյտ 4:5) Աստծու յոթ Հոգիներն են՝ յոթնապատիկ ուժեղացված Հոգին (1:4)՝ որպես Եհովայի յոթ աչքերը (Զք 4:10), փրկագնող Գառան յոթ աչքերը (Հյտ 5:6) և կառուցման քարի յոթ աչքերը (Զք 3:9)՝ Եռամեկ Աստծու լիակատար արտահայտության և Աստծու տան վերակառուցման համար.

Ա. Զք 3:9-ում Հեսուի առջև դրված քարը Քրիստոսի՝ որպես Աստծու կառույցի համար նախատեսված քարի նախատիպն է (Սղմ 118:22, Մտթ 21:42). այն, որ Եհովան քարի վրա փորագրելու է դրա փորագրությունը, ցույց է տալիս, որ երբ Քրիստոսը մեռնում էր խաչի վրա, Աստված Նրա վրա որոշակի «փորագրություն», կամ «հատում» արեց. այն, որ Եհովան մեկ օրում հեռացնելու էր երկրի անօրենությունը, ցույց է տալիս, որ Քրիստոսը, ում վրա Աստված աշխատել է, մեկ օրում՝ Իր խաչելության օրը, հեռացնելու էր Իսրայելի երկրի մեղքը. խաչի վրա Իր մահվան միջոցով Քրիստոսը՝ Աստծու Գառը, տարավ աշխարհի մեղքը (Ա Պտ 2:24, Հվհ 1:29).

1. Քարը, Եհովան և Գառը մեկ են. Քրիստոսը փրկագնող Գառն է և կառուցման քարը, Նա նաև Եհովան է. Քրիստոսը Գառ-քարն է՝ Գառը՝ փրկագնման համար, և քարը՝ կառույցի համար՝ Հյտ 5:6, Զք 3:9:
2. Աստծու կառույցի մեջ Քրիստոսը հիմքի քարն է, որը պահում է կառույցը, Նա անկյունաքարն է, որը միացնում է Իր Մարմնի հրեա և հեթանոս անդամներին, Նա նաև շնորհքի վերնաքարն է, որն ավարտունացնում է ամեն բան Աստծու կառույցի մեջ՝ Եսյ 28:16, Ա Կրթ 3:11, Եփս 2:20, Ա Պտ 2:6, Զք 4:7:
3. Այն, որ Քրիստոսը՝ Աստծու Գառը, յոթ աչքեր ունեցող կառուցման քարն է, ցույց է տալիս, որ Քրիստոսի յոթ աչքերը Աստծու կառույցի համար են նախատեսված՝ Հվհ 1:29, Զք 3:9, Հյտ 5:6:
4. Քրիստոսը յոթ աչքերով՝ յոթ Հոգիներով հանդերձ կառուցման քարն է Իրեն մեր մեջ ներարկելու համար, որպեսզի մեզ թանկագին նյութերի փոխակերպի Աստծու կառույցի համար. երբ Տերը նայում է մեզ, Նրա յոթ աչքերը Նրան ներարկում են մեր մեջ՝ Զք 3:9, Ա Կրթ 3:12ա, Հյտ 3:1, 5:6:

Բ. Աստծու կառույցի ավարտունացման համար յոթնապատիկ ուժեղացված Հոգին Քրիստոսի՝ որպես փրկագնող Գառան և կառուցման քարի աչքերն է, որոնք հետևում ու քննում են մեզ, ինչպես նաև մեր էության մեջ ներարկում ու փոխներարկում Քրիստոսի էությունը, հարստությունն ու հոգսը՝ Զք 3:9, 4:7, Հյտ 1:14, 5:6.

1. Գառան յոթ աչքերը մեր մեջ են ներարկում Քրիստոսին՝ որպես իրավական Փրկագնիչի, իսկ քարի յոթ աչքերը մեր մեջ են ներարկում Քրիստոսին՝ որպես օրգանական Փրկչի՝ երկրի վրա Աստծու տնտեսական շարժման համար Իր իրավական փրկագնման միջոցով և Իր օրգանական փրկության շնորհիվ՝ հանուն Իր կառույցի՝ Հվի 1:29, Գրծ 4:11-12, Հռմ 5:10:
2. Մեր ներսում երկու ճրագ կա՝ յոթնապատիկ ուժեղացված Աստծու Հոգին մեր հոգում (Առկ 20:27, Հյտ 4:5, Ա Կրթ 6:17). փոխակերպվելու համար մենք պետք է աղոթքի մեջ լիովին բացվենք Տիրոջը և թույլ տանք, որ Տիրոջ ճրագը յոթ կրակե ճրագների հետ քննի մեր շնչի բոլոր «սենյակները»՝ մեր ներքին մասերի վրա շողալով ու դրանք լուսավորելով, որպեսզի դրանց կյանքով մատակարարի:
3. Ամենաշատ փոխակերպումն ապրում է նա, ով լիովին բաց է Տիրոջ համար. Քրիստոսի փնտրող հավատացյալների ներսում յոթնապատիկ ուժեղացված Հոգու աշխատանքի արդյունքում նրանք ուժեղանում են՝ դառնալով հաղթողները Քրիստոսի Մարմնի կառուցման համար, որը կավարտուանա Նոր Երուսաղեմում:

Գ. Իր հարության մեջ Քրիստոսը՝ որպես վերջին Ադամը, դարձավ կենդանարար Հոգին (Ա Կրթ 15:45բ, Հվի 6:63ա, Բ Կրթ 3:6բ), որը նաև յոթնապատիկ ուժեղացված Հոգին է. այդ Հոգին կյանքի Հոգին է (Հռմ 8:2), հետևաբար յոթ Հոգիների կոչումը աստվածային կյանքն Աստծու մարդկանց մեջ ներդնելն է՝ Աստծու հավիտենական բնակատեղի՝ Նոր Երուսաղեմի կառուցման համար:

Դ. Յոթնապատիկ ուժեղացված Հոգին յոթ կրակե ճրագներն է, որոնք այրում, լուսավորում, մերկացնում, դատում, մաքրում և վերաձուլում են մեզ, որպեսզի Աստծու նորկտակարանյան տնտեսության իրականացման համար ոսկե ճրագակալներ առաջացնեն՝ Հյտ 4:5, 1:2, 4, 9-12, 20:

Ե. Ճրագակալի երկու կողմերում գտնվող երկու ձիթենիները խորհրդապատկերում են Հեսուին՝ քահանայապետին, և Զորոբաբելին, ով այն ժամանակ կառավարիչ էր, որոնք ձիթենու երկու որդիներն էին՝ լցված Եհովայի Հոգով՝ Աստծու տաճարը վերակառուցելու համար՝ Զք 4:1-6, 11-14.
1. Յուղի երկու որդիները նաև այս դարաշրջանի վերջին երեքուկես տարիների երկու վկաների՝ Մովսեսի ու Եղիայի նախատիպն են, ովքեր մեծ նեղության ժամանակ Աստծու վկաները կլինեն՝ Աստծու ժողովրդին՝ իսրայելացիներին և Քրիստոսի հավատացյալներին, ամրապնդելու համար՝ Հյտ 11:3-12, 12:17:
2. Սկզբունքորեն՝ Քրիստոսի բոլոր հավատացյալները պետք է թարմ յուղի որդիները լինեն՝ մարդիկ, որոնք լցված են թարմ, ներկա և ավարտուանցած Հոգով՝ որպես ուրախության յուղով, որպեսզի Հոգուն հոսեցնեն ճրագակալի մեջ դրա փայլող վկայության՝ Հիսուսի վկայության համար՝ 1:12, 20, Սղմ 45:7, 46:4, 92:10, Հվի 7:38.

ա. Եկեղեցին՝ որպես ճրագակալ, Եռամեկ Աստծու շոշափելի մարմնացումն է յոթնապատիկ ուժեղացված Հոգով՝ որպես Աստծու յուղով, Նրա աստվածային բնության մեջ:

բ. Յուղն ինքը ոսկին է (Զք 4:12). սա նշանակում է, որ ոսկին յուղի նման հոսում է. երբ ճրագակալի մեջ ավելի շատ յուղ է լցվում, դա նշանակում է, որ դրա մեջ ավելի շատ ոսկի է ավելացվում:

գ. Օր օրի մենք պետք է գին վճարենք, որպեսզի ավելի շատ ոսկի ձեռք բերենք՝ ավելի շատ Աստված՝ Իր աստվածային բնության մեջ, որպեսզի մաքուր ոսկուց ճրագակալ դառնանք ոսկե Նոր Երուսաղեմի կառուցման համար՝ Բ Պտ 1:4, Հյտ 3:18, 1:20, 21:18, Մտթ 25:8-9:

դ. Սա մեր այսօրվա ապրումների հանդեպ կիրառելուն զուգընթաց տեսնում ենք, որ մեզնից հոսող Հոգին Աստված է, իսկ Աստված ոսկին է. հետևաբար երբ Քրիստոսին սպասավորում ենք մյուսներին՝ նրանց յուղ մատակարարելով, մենք իրականում նրանց մատակարարում ենք Աստծով. Աստված մեզնից արտահոսում ու ներհոսում է նրանց մեջ՝ Զք 4:12-14, Հվի 7:37-39, Բ Կրթ 3:3, 6, 8:

ե. Մենք բոլորս պետք է ձիթենիներ լինենք, որոնք Աստծուն իրենցից հոսեցնում են ուրիշների մեջ. այսպիսով՝ նրանք, ովքեր Աստծուն հոսեցնող ձիթենիներ են, կարիք ունեցողներին կապահովեն յուղով՝ Հռմ 11:17, Ղկս 10:34, հմմտ Հվի 7:37-39:

© 2022 Living Stream Ministry